

373

C-21

20832

370

2242-24

1899

1026

THE NATIONAL ARCHIVES

1026

4/01

RECEIVED

RECEIVED
NATIONAL ARCHIVES
COLLEGE PARK, MARYLAND
APR 1 1964

2002

373
8-91

Բրեսկ Է. Ռ. Զ. Դարձան
Հայկական պաշտոն
Հայկական

ԲԻՆԿԱ ՍԻՄԵՐՈՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԱՆՆԵՐ

ՏԵՍՈՒՋ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

370
2242-ՇԱ

Ճ Ա Ռ

Հայկական

ԴՊՐԱՆՈՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԻՍ

«Որոց յանձն եղեն պաշտօնք պա-
տասխանատուք, նոցունց իսկ պարտիս
ի վերայ կայ բարեխիղճ իմն և անձնա-
նուէր եղանակաւ կատարել զայն պարտիս
ըստ չափու կարեաց առ ի անդատա-
պարտ կացուցանել զանձինս առաջի
Աստուծոյ, և եկեղեցւոյ և ժողովրդեան»:

ԿՈՆԴԱԿ Յ. Տ. ՄԿՐՏԻՋ Ա. ՍՐԲԱՋԱՅՈՑ
ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻ, 1898 թ., 28 ՕԳՈՍՏՈՍԻ, № 955

1004
15617



ՄՈՍԿՈՒՄ

ՏՊԱՐԱՆ Բ. ԲԱՐԵՆՈՒԴԱՐԵԱՆԻ.
1899.

2010

8336

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 10 Іюня 1899 г.

Типогр. Х. Бархударянъ, Москва, М. Златоустов. пер., д. Гиршъ.

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳ. ԴՊՐԱՆ. ՏԵՍՈՒԶ՝

ԲԺԻՇԿ ՍԻՄԵՅՈՆ ՇԱՀ - ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Ճ Ա Ռ Ը¹⁾

(Արտասանած է 1898 թ. նոյեմբերի 13-ին՝ Դըպ-
րանոցին ներկայանալիս: Դպրանոցի դահլիճում ներ-
կայ էին՝ Տ. Փոխանորդ Երևանի թեմի և նախագահ
Ե. Յ. Թ. Յ. Դպրանոցի վարչութեան՝ գեր. Ներսէս
արքեպիսկոպոսը, բոլոր հոգաբարձուները, ուսուցիչ-
ները և աշակերտները: Նախ՝ արժ. Կորիւն քահանայն
(ուսուցիչ Ե. Յ. Թ. Յ. Դպրանոցի) կարդաց Վեհա-
փառ Կաթողիկոսի կոնդակը՝ 1898 թ. նոյեմբերի
10-ի, № 1316²⁾). ապա՝ Տ. Փոխանորդը, յայտնելով
իր շնորհակալութիւնը տեսչի - պաշտօնակատար՝ պ. Ս.
Տէր-Գաբրիէլեանցին, հրաւիրեց ուսուցիչներին և աշա-
կերտներին՝ «Ճանաչել օրէնքը և լինել կարգապահ»:
Ապա խօսեց պ. տեսուչը):

Ինչպէս լսեցինք՝ համաձայն ազգիս Վեհա-
փառ հայրապետի սրբատառ կոնդակին՝ 10-ն
նոյեմբերի 1898 ամի, № 1316, եւ հաստատ-

¹⁾ Արտատպւում է Նոր-Դար - ի 1898 թ. №№ 221,
223 և 225-ից:

²⁾ ՄԿԲՏԻԶ ծառայ Յիսուսի Քրիստոսի և Անհա-
սանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կա-

ւած հմ տեսուչ Երևանի Հայոց Թեմական
Հոգևոր Դպրանոցի:

«Սա — դպրանոցը Հասարակական Հաստա-
տութիւն է և ամենասրբազան Հաստատութիւն-
ներից մինը: Այստեղ գործող անձինք գործել
են նոյն իսկ Հասարակութեան կողմից, Հասա-
րակութեան անունով և Հասարակութեան Հա-
մար» — գրում է «Մեծապատիւ պ. Նախագահին
ուսուցչական ժողովի Հայոց Հոգևոր Թեմական

Թողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք Հա-
մազգական Նախամեծար Աթոռոյ Առաքելական Մայր
Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, գերապատիւ
Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի փոխանորդի Հայրապե-
տական Թեմին և Նախագահի Հոգաբարձութեան
Թեմական Հոգևոր դպրոցին Երևանայ Հայրապետական
օրհնութեամբ յայտ առնեմք:

Ընկալեալ զյայտարարութիւն գերապատուութեանդ
տուեալ ի 22-ն ամսեան հոկտեմբերի անցելոյ թ. 398.
որոյ և ներփակ պատճէն արձանագրութեան հոգա-
բարձական ժողովոյ դպրանոցիդ, յորմէ երևի ընտ-
րութիւն և հրաւեր պ. բժ. Ս. Շահնազարեանց, ի
պաշտօն տեսչի դպրանոցին Երևանայ, Միք սովին
կոնդակաւ Մերով, Հաստատեմք զյիշեալ պ. Սիմէօն
ի պաշտաման տեսչութեան, ըստ միջնորդութեան ձե-
րոյ և միաձայն ընտրութեան և խնդրանաց պատուար-
ժան անդամոց հոգաբարձութեանդ:

Ուստի և պատուիրեմք գերապատուութեանդ, յայտ-
նել զհաստատութենէն տեսչին պ. պ. հոգաբարձուաց,
տալով գիտել նմին հաստատելոյն, ի վարել զպաշ-
տօն իւր բարեխղճութեամբ և սրտի մտօք, առ ի ար-

Դպրանոցի Երևանայ» — Դպրանոցի «Յիսնամեայ
պատմութիւնը» գրելու համար ընտրուած մաս-
նաժողովը³⁾:

Այսօր, այս աւելի քան 61-ամեայ⁴⁾ հռչա-
կաւոր՝ իր Ժողովրդական-Եկեղեցւոյ Հռչակաւոր
Հիմնարկութեան տեսչի բարձր պաշտօնը ստանձ-
նելիս, թոյլ տւէք ինձ հրապարակաւ երգել՝
չինայել ոչ մի ճիգ, չինայել ոչ մի ջանք՝
բարձր պահելու Երևանի Յ. Թ. Հ. Դպրանոցի
տեսչութեան դիրքը:

Սակայն, Ձերդ գերապատուութիւն և Դուք,
պատուարժան նիզակակից ընկերներ, ոչ պակաս
քան ես, գիտէք ամեն մի պաշտօնավարութեան
դժւարութիւնները:

«Այդ արհաւիր արհաւիր քան զայն» — ասում
է առածը:

Եւ յիշաւի: Պաշտօնեան, որ առանձնանում
է իր առանձնասնեակում՝ կարինետում և մի-

դարացուցանել զյոյան ընտրողաց իւրոյ և գրաւել
զսէր և զհամակրանս աշակերտելոցն դպրոցին:

Ողջ լինել ձեզ և յաջող ցանկամբ ընդ պա-
տուարժան հոգաբարձուացդ ի Տեառնէ. Ամէն:

ՄԿԻՏԻՉ Կաթողիկոս ամենայն Հայոց:

Տես շնոր-Դար, 1898 թ., № 211:

3) Տես 1837—1887 Յիսնամեակ Հայոց Հոգևոր
Թեմական Դպրանոցի Երևանայ, էջ ԺԸ:

4) Ե. Հայոց Թ. Հ. «Ճեմարանը» բացւած է Յովհան-
նէս Ը. Կաթողիկոսի օրով՝ 1837 թ. սեպտեմբերի 2-ին,
Սինոդի № 470 հրամանագրով. Տես ibid., էջ 3 և 4:

միայն իրեն ճանաչում միակ արժանի ղեկավար իր պաշտօնավարութեան,—նման տեսակ պաշտօնեան, ամենալաւ դէպքում, իմ տեսակէտից, անյարժապ պաշտօնեայ է:

Ապրելով՝ կեանքի՝ մտաւոր և բարոյական կեանքի հետ շփւելով, մենք կրթւում ենք և՛ մտաւորապէս, և՛ բարոյապէս. այդպիսով, այսպէս ասած, ընդլայնում է մեր մտապատկերների հորիզոնը...

Բացայայտ է, թէ ի՞նչ ծառայութիւն կարող է անել փորձեալ՝ գործին լաւ և հնուց ծանօթ անհատը՝ մի որ և է նորեկին. բացայայտ է, որ ի՛մ Կեդրոն-Եւրոպայի յաջողութիւնը Բրեյլէ ամբողջապէս Ձեր յետ-մահ է:

«Ինչ մարդ ունենայ իւր արանը հաւասարեմ ընկեր, Յերեկե նման փայլում է մոլոր Բրեյլէ մարդը»...

Ո՛ր, որքան խելացի է այդ երգը...

Իմ բոլոր յոյսը Ձերոյ գերապատուութեան, Ձեր, պատւարժան նիղակակից ընկերներիս, և Ձեր, սիրելի աշակերտներիդ, վրայ է:

Դուք բոլորդ, հաւատարիմ լինելով Դպրանոցիս գործին, ունիք թեթեւացնելու, ունիք զիւրացնելու իմ տեսութեան գործը:

Ուրեմն, ընդունէք նորեկիս ջերմագին ողջոյնը, ոգւոյս ամենանուրբ լարերի այս միահամուռ շշնջիւնը, սակայն ընդունէք՝ լաւ ըմբռնե-

լով և ճանաչելով մեր բոլորիս պարագայ-դրութիւնները:

«Որոյ յանձն էլէն պաշտօն+ պարագայանարո՛ւ, նոյն-նոյ իսկ պարտե՛ս ի վերայ էայ Բարեխիղճ իմ և անշնանո՛ւր Եղանակա՛ն հարարել զայն պարտե՛ս ըստ լաւո՛ւ հարեայ առ ի անդարարար կայոցանել զանշնան առաջի Սարո՛թոյ, և Ելեղեցոյ և Ժողովրդեան»⁵⁾:

Ազգիս գորովազուծ Պետի՝ «Հայոց վշտակիր Հայրիկի» ս. տ. սրբատառ կոնդակի՝ 28-ն օգոստոսի, № 955՝ այդ բառերը—զա մի դրօշակ է, որ ամենուրեք պիտ ծածանւի մեր յարաբերութիւնների վրայ, — զա մի դրօշակ է, որը երբեք չպէտք է բաց թողնեն իրենց ձեռքից Դպրանոցիս և՛ կառավարչական, և՛ ուսուցչական, և՛ աշակերտական խմբերը...

Դպրանոցիս, այսպէս ասած, ցանկապատում և ըստ կարելոյն չափ դոյն այդ ցանկապատից դուրս մենք բոլորս ունինք գործելու իբրեւ մի մարմն, որը իր ամբողջ՝ միահամուռ ոյժերով ունի, այսպէս ասած, զիմադրելու՝ դարմանելու իր որ և է անդամի չարապատեհ հիւանդութիւնը:

Ահա՛ այն ուղղութիւնը, որին ես հետեւելու եմ իմ պաշտօնավարութեան ընթացքում. ահա՛ այն համբերալի ուղի, որով գնալով մենք ու-

⁵⁾ Տես «Մշակ», 1898 թ., № 162:

նինք իրականացնելու այս աւելի քան 61-ամեայ հասարակական հիմնարկութեան նպաստելը՝ «տարածանել ի միջի նոցա՝ աշակերտաց զճշմարիտ բարեպաշտութիւն»⁶⁾։

Այսպէս է որոշում երևանի Յ. Թ. Յ. Դպրանոցի նպատակը դոյն Դպրանոցի 1843 թ.-ի 20-ն յունւարի «Կարգադրութիւնը» իր § 1-նում. գրեթէ դոյն այդ իսկ խօսքերով որոշում են Դպրանոցի նպատակը և յետագայ՝ 1860 թ.-ի 13-ն դեկտեմբերի «Կարգադրութեան» և 1865 թ.-ի 31-ն յունւարի «Կանոնադրութեան» §§ 1-ները։

Մի բոպէ կանգ առնենք այդ «Կանոնադրութիւններ» վրայ։

Ըստ 1843 թ.-ի «Կարգադրութեան» Դպրանոցիս և՛ ուսումնական, և՛ սնտեսական զեկը վերատեսչի ձեռքումն էր։ «Վերատեսուչն է անընդմիջաբար կառավարիչ սեմինարիի և կառավարութենէ նորա կախին ամենայն հանգամանք դպրոցի» — կարդում ենք 1843 թ.-ի 20-ն յունւարի «Կանոնադրութեան» § 30-երորդում⁷⁾։

1860 թւականի, 13-ն դեկտ. «Կարգադրութեան» շնորհիւ Ե. Յ. Թ. Յ. Դպրանոցի պաշտօնական կեանքը կերպարանափոխուեալ է՝ այս պատկառելի հիմնարկութեան գոները լայն և

⁶⁾ Տես «1837—1887 Յիսնամեակ և այլն», էջ 289։

⁷⁾ Տես ibid., էջ 294։

հիւրընկալ բացուեալ են ժողովրդի հսկողութեանը՝ Դպրոց է մտնում ժողովրդից ընտրած տարր՝ հոգաբարձութիւնը։ Դա մի շատ ցանկալի նորութիւն էր կրթութեան տաճարիս կեանքում։

Հոգաբարձութեան Դպրանոցիս մատուցած ծառայութիւնը ահագին է, երբեմն նոյն իսկ իդէալական. ահա ինչ է գրում—յայտարարում 1880—1881 թ.թ. տարեշրջանի հոգաբարձութեանը՝ հոգաբարձական պաշտօնական մարմնի «բարոյական պարտականութիւնները» իւրացրած՝ զանձապահ — հոգաբարձու Պօղոս Պօղոսեանը՝

«Իմ կարծիքով դպրանոցիս նիւթական վիճակի այս դրութեան մէջ ընկնիլը ոչ այլ ինչեց է, եթէ ոչ, թող ներուի ինձ ասել, հոգաբարձութեանս թուլութիւնից և անհոգութիւնից, և եթէ այս կերպ դարձեալ շարունակենք այսուհետեւ ևս դպրանոցի գործերը վարելու, այն ժամանակ դպրանոցի գոյութիւնն անգամ ինձ կասկածելի է երևում, վասն զի ծախքը մոտաքէն համեմատաբար շատ աւելի է»⁸⁾։

1880—1881 թ.թ. տարեշրջանի զանձապահ հոգաբարձուի՝ Դպրանոցիս հոգաբարձութեան ուղղած այդ գրաւոր յայտարարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ իդէալական ձգտումներով տողորւած մարդու սրբազան տենչը...

⁸⁾ Տես ibid., էջ 175—176։

Օրինակելի հոգաբարձի... .

Սակայն այստեղ անյարմար են մանրամասնութիւնները. կասեմ միայն, որ առաջին հոգաբարձի-նէրը ընտրւել են 1860 թ.-ի 26-ն հոկտեմբերի, ուրեմն՝ աւելի քան 38-ը տարի սրանից առաջ...

Ինչ հասած տեղեկութիւններին համաձայն՝ 1865 թ.-ի 31-ն յունուարի, «Վշտալի Մատթէոս կաթողիկոսից» հաստատւած «Կանոնադրութիւնը» գործադրող-ն է միւլ աշուր: Այդ հանգամանքը առիթ է տալիս ինչ կանգ առնել այդ «Կանոնադրութեան» մի մանրամասնութեան վրայ:

Նախկին՝ 1843 թ.-ի (§ 21.) և 1860 թ.-ի (§ 26.) «Կարգադրութիւնները» առաջարկում էին իբրեւ «հնար ուղեւոր»՝ «պահել ի վերայ ծնդաց, թողուլ անձաշ քանի մի ժամս և տալ զպատիժ մարմնական վճռութեամբ վերատեսչի...»⁹⁾:

Դարավերջիս ձայնը բողոքելով բողոքում է բոլոր այդ «ուղղելոյ հնարներին» դէմ, իբրեւ՝ հաւանականագործական «խնդրելի»։ ահա ինչու մենք այսօր ողջունում ենք 1865 թ.-ի «Կանոնադրութեան» մէջ այդ «ուղղելոյ հնարներին» կատարեալ բացակայութիւնը:

Ես ջերմազին զոհունակութիւնով կարգացի պատուարժան նախորդներին մէկի՝ պ. Աբիսո-

⁹⁾ Տես ibid., էջ 293 և 302.

ղում Յովհաննիսեանի 1886—1887 թ.թ. տառերջանի զեկուցման հետեւալ տողերը՝

«Գ.) Մանրամասնօրէն քննել պատժի հարցը և վճռել է (Դպրանոցիս ուսուցչական խումբը Ար. Յովհաննիսեանի նախագահութեամբ) մեր Դպրանոցի միջից անպայման վերցնել Ֆիլիքական պատիժը և նոր սահմաններ է որոշել աշակերտաց զանցառութեանց համար զործ դրուելէ միջոցներին»¹⁰⁾:

Ես ղեռ ունիմ ծանօթանալու պատուարժան Ար. Յովհաննիսեանի օրով որոշւած «սահմաններին» հետ և առայժմ կասեմ այսչափ՝

Նախախնամութիւնից մեղ վիճակած է ամենաընտիր և մեծագոյն ձիրք՝ Խօսք. և միւլ քոլորիս պարս է ապացոյցանել. որ յերաւի արձանի եւս այդ մեղ վիճակած առաւելութեանը...

Դպրանոցիս Դեր. նախագահ Ներսէս արքեպիսկոպոսը հրաւիրեց ինչ ս. տ. անցեալ հոկտեմբերի 16-ին իր մօտ և յայտնեց՝ «Երեւանի Յ. Թ. Յ. Դպրանոցի հոգաբարձութիւնը միաձայն վճռել է այսօր հրաւիրել ձեզ տեսուչ դպրանոցիս»։ ապա՝ Դեր. նախագահի խօսքը անցաւ Երեւանի Յ. Թ. Յ. Դպրանոցի Կրթական Նիւլ Կրթութեան: Ես ի նկատի առնելով այդ, խօնարհաբար խնդրեցի իմ ապագայ ռոճկից 1000 բուբլի ընդունել ինձից իբրեւ նւէր Դպրա-

¹⁰⁾ Տես ibid., էջ 249.

նոցին: Այսօր թոյլ տուէք ինձ խոնարհաբար խնդրել արժանարգոյ հոգաբարձութեանդ ընդունել ռոճկիս մնացածը՝ 500 ռուբլին ևս իբրև նւէր Դպրանոցիս և գործադրել՝ չքաւոր աշակերտներին հազուստ և ոտնամաններ զնելու:

Իմ ջերմագին ցանկութիւնն է՝ իրականաբար տեսնել Դպրանոցիս 1879 թ.-ի պատւարժան հոգաբարձու պ. բժ. Լևոն Տիգրանեանցի առաջարկութիւնը՝ «աշակերտների հազուստը միաձեռութեան վերածել այն է, «սե կտոր, պարանոցի վրայ ունենալով կայնած ետխա կապուտ կանդով, որ շարունակվում է կուրծքի վերայ ժապաւէն և սե զլխարկ նոյնպէս կապոյտ կանդերով»¹¹⁾:

Գուցէ յաջորդ տարիների ընթացքում «աշակերտների հազուստի» այդ «ձեւը» փոփոխութիւնների է ենթարկւել. ես ևս այսօր չեմ պնդում նախկին՝ 1879 թ.-ի պատւարժան հոգաբարձւի առաջարկած «ձեւը». իմ խօսքը «աշակերտների հագուստի մասին» «Ինչ-էն-է մասին է:

Յուսով եմ, եթէ ռոճկիս մնացածը՝ 500 ռ. բաւական չի լինիլ այդ նպատակը իրագործելու, պատւարժան հոգաբարձութիւնդ մի կերպ կըլրացնի պակասը *):

¹¹⁾ Տես ibid., էջ 166 և 274.

*) Տես վերջը՝ Յ. Գ.

Անշուշտ, Ձեզ քաջ յայտնի է՝ Նորին բարձր Սրբազնութեան Փոխանորդի թիմակալին հայոց երեանայ Տեառն Գէորգ եպիսկոպոսի Սուրէնեանց, ի տոհմական պատուաւոր քաղաքացւոյ. 'ի հայրապետէ Սրասխանեանց Ազուլեցւոյ յայտարարութիւնը: «Ջերմեանդ» «նուիրատուն» «երեանի հայոց թիմական հոգևոր Դպրանոցի խղճալի դրութեանը կարեկցելու» նպատակով գրում է իր «ի 2-ն փետրուարի 1885 ամի» «Յայտարարութեան» մէջ՝

«... Վճռեցի նուիրել յօգուտ նոյն դպրանոցի երկու հարիւր ռուբլի, որը յայտարարութեանս հետ ներկայացնելով կրինդրէի խոնարհաբար ընդունել այն այս պայմաններով՝ ա) իմ նուիրած երկու հարիւր ռուբլին պիտի անձեռնմխելի մնայ մինչ ցյաւիտեան և անմիջապէս Ձերդ սրբազնութեան և Ձեր յաջորդաց և դպրանոցի հոգաբարձութեան հսկողութեան տակ և բ.) այդ գումարից տարուէ տարի ստացած տոկոսը ըստ տնօրէնութեան հոգաբարձուաց գործ դրուի դպրանոցում ուսանող ձրիավարժ աղքատ աշակերտաց հազուստների համար»:

Տ. Փոխանորդը մակագրում է՝

«Առաքելով ընդ յայտարարութեան Պ. Սրասխանեանցի զնուիրեալն նորա յօգուտ Ազգային հոգևոր Դպրանոցի երեանայ զերկու հարիւր ռուբլի գրամս, առաջադրեմք հոգաբարձութեանդ տնօրինել զոր արժանն է ըստ բառական

մտաց յայտարարութեան նորին: Ի 5-ն Փետրուարի 1886 ամի. Երևան»¹²⁾:

Այդպիսով 1885 թ.-ի փետրուարի 2-ին Հիմնում է «Ե. Յ. Թ. Դպրանոցում ուսանող յրեւելաբէ ազատ աշակերտաց հաճոսարներէ Դրամագլուխը»:

Ազոլեցի տոհմական պատուաւոր քաղաքացի Հայրապետ Արասխանեանցի այդ Դրամագլուխէ հաճոսարներէ անհատներէ լուծւային...

Վերջացնելով խօսքս եւ թողլ եմ տալիս ինձ մի փոքր ռէտորոսպիկցիա՝ աչքի առնել Երևանի Յ. Թ. Յ. Դպրանոցի պատմական անցեալը:

Խօսքս 1849 թ.-ի յունւարի 1-ի մասին է: Վերատեսուչ Թուման Թէվլումովը (+) հրաժարւել էր իր պաշտօնից և ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսէս Ե-ը ամբողջապէս իր ձեռքով գրում է № 1 կոնդակը յանուն «պատուելի միաբանութեան Հայոց յԵրևան քաղաքի»: Այդ կոնդակում կարդում ենք՝

«... Յանձնեալ եմ Բաւնալ զԵմիւնարիւս»¹³⁾ անոնն յոսոսմարանէ Երևանայ Հայոց զի սէմինարիա անունն նշանակէ սերմնացան՝ ուր

¹²⁾ Տես ibid., 196—197:

¹³⁾ Երևանի Թ. Յ. Դպրանոցը զանազան ժամանակներում կրել է հետեւեալ անունները՝ «Ճեմարան», «սեմինարիա», «ուսումնարան», «Հոգեւոր դպրոց», «Դպրանոց»: Տես ibid., էջ ԺԷ:

Հարկ է լինիլ ամենայն Հոգեւոր զխտութեանց սերմանիք:

Մինչդեռ՝

«Եղեալ են զայն մեծ անունն ի վերայ մանկավարժարանի, յորմէ ահա աւելի քան 10 տարի ունիւ «Երմարանական Գրանի արդիւնք ուսմանց...»¹⁴⁾:

Այդպիսով, Ներսէս Ե-րդ կաթողիկոսը Երևանի Յ. Թ. Յ. Դպրանոցը գտաւ «անարժան անունն «Եմիւնարանի»¹⁵⁾:

1849 թ.-ի յունւարի 1-ը¹⁶⁾ այն սղալեց օրերիցն էր, երբ ըստ Դպրանոցիս «Յիսնամեակը» պատմագրողների՝ «Դպրանոցներն են աշակերտներ յրանել և ու աշակերտները Դպրոց»¹⁷⁾:

Մի երկու կտոր քաղաճք ևս Երևանայ Յ. Թ. Յ. Դպրանոցի «Յիսնամեակին» նւիրած պատկառելի աշխատութիւնից:

1837 թ.-ին — Դպրանոցիս բացման տարին է— ջնայելով, որ ուսումը չի¹⁸⁾ էր և «ատե-

¹⁴⁾ Տես ibid., էջ 27:

¹⁵⁾ Տես ibid., էջ 27:

¹⁶⁾ 1849 թ. յունւարի 1-ը Դպրոցի փակման օրն էր. Դպրոցը կրկին բացւում է ս. Էջմիածնի սինոդի տեղակալ-ատենապետ Ղուկաս արքեպիսկոպոս Արագածունու օրով՝ 1857 թ. նոյեմբերի 11-ին՝ Սինոդի հոկտ. 18-ի № 1980 հրամանագրով: Տես ibid., էջ 27, 33, 34:

¹⁷⁾ Տես ibid., էջ 25:

¹⁸⁾ Դպրանոցում ուսումը ձրի էր մինչև 1860 թ.

նակալները և ամիսներով առաջ վարձեալ
ուսուցիչները» շատ էին աշխատել, «գարձեալ
ուսման տարւայ առաջին ամիսներում շատ
պակաս է եղել հոգեւորական ծագումն ունեցող
աշակերտաց թիւը» և կոնսիստորիան, ինկատի
առնելով վերատեսուչ Թէվումովի այդ առթիւ
գրած «Յայտարարութիւնները», 13-ին յունիսի
գրում է իր «խիստ» հրամաններից մէկը՝

«Ի վերայ հիման կայսերական հրովարտակին,
որ ի 1-ն սեպտեմբերի 1723 ամի, զորդիս Տէր-
Զաքարիայի (Քանաքեռ գիւղի) և Տէր-Յակով-
բայ (Արամուս գիւղի) ի ստանալ այսր հրա-
մանի իսկոյն Բռնի առաքել ի հոգեւոր ճեմա-
րանն Երեանայ»¹⁹)...

1860 թ.-ի «Կարբւոյ և այլոց կողմանց գոր-
ծակալ Մեսրովը վարդապետը (Սմբատեանց)²⁰)
ժողովարարութեան տումարը դարձնելով՝ յայտ-
նում է՝ «յօգուտ շինութեան հոգեւոր Դպրանոցի
Երեանայ շէնքի ցանկացող ու գանալան պատ-
ճարանոց»...²¹):

Հոկտ. 26-ը, երբ առաջին «Հոգաբարձուաց ընտրու-
թեանց և աղբիւրների սրոշման թերթում» գրում է՝
«կարգադրել զի ծնողք աշակերտաց բացի հոգեւորա-
կանաց և ի չքաւորաց վճարեցին ի տարին զ25 ր.
արծաթ»։ Տես ibid., էջ 49։

¹⁹) Տես ibid., էջ 5։

²⁰) Ապա՝ արքեպիսկոպոս և այսօր՝ վանահայր ս.
Կարապետի վանքի (Երնջակ, Հին-Նախիջևանի գ.)։

²¹) Տես ibid., էջ 46։

«1870 թ. մայիսի 1-ին Երեանայ փոխանորդ
Մեսրովը վարդապետը (Սմբատեանց) հրաւեր է
կարգում ժողովուրդին հոգեւոր Դպրոցը բարե-
քելու և ապահովելու համար, որովհետեւ, ինչ-
պէս երևում է, ձանձրացած է լինում ժողովուրդի
բամբասանքներից՝ «թէ մեր հոգեւոր ուսումնա-
րանում ոչինչ չեն սովորեցնում, մինչև հիմայ
այնտեղից մի օրինաւոր ուսումն առած մարդ
չէ դուրս եկել և այլն» և երկար ու գեղեցիկ
բացատրելով Դպրոցի աննախանձելի գրութեան
պատճառները, «ո՛վ ո՛ւմ քան զէ Կո-ւն Նրանից
էլ չլէսք է պահանջէ» ասելով՝ օրինակ է բերում
Ազուլեաց դպրոցների կարծ ժամանակում ու-
նեցած յաջողութիւնն և 30,000 ր. դրամա-
զուխ կազմելը. և «վերջապէս մեր վախճանա-
կան խնդիրքը քան թէ առաջարկութիւնն,
ասում է, այն է, որ դուք առանց սպասելու
ուրիշների օգնութեանը, աշխատէք ձեր սեպհա-
կան վաստակը դործ դնելով անխնայ՝ յառաջ
տանէք ձեր զաւակները բարոյական և մտաւո-
րական կրթութեան մէջ»։ Առաջարկում է ա-
շակերտներ ընդունելու համար մի քանի յօդ-
ւածներ «յատկապէս նրանց յառաջադէմ կա-
ցուցանելու և Դպրոցի փառք ու պատիւը
բարձրացնելու, ապաւելով նրան այգին շէնքի ու
միայն հետո՝ կանգնած պարտաւ պահանջող
անշուրհք մարդոց նման արքայ-նիջ Բարձրաշէնքից»²²):

²²) Տես ibid., էջ 144։



Վերջապէս, Ե. Ն. Թ. Ն. Դպրանոցի դահլիճում (ոչ այս՝ այս դահլիճը հիմնաւոր է Դպրանոցի նախկին՝ 1872 և 1886 թ.թ. արժանայիշատակ հոգաբարձու Յակոբ-Ջան Գեորգեանի (+) մարդասիրաբար ներաբերութեամբ 1889 թ.) 1871 թ. յունիսի 11-ին տեղի է ունենում հասարակութեան ժողով և «քաղաքացիք լեւրահա-ասրած էն էրեւո՛ճ էրէնց Դպրանոցի Բար-ոսման վերաբերմամբ. ուստի որոշում են կարգել իւրաքանչիւր եկեղեցուց մի-մի երեսփոխ վերահասութիւն գործելու աշակերտների յառաջադիմութեան և «կառավարիչ - տեսչի»՝ Խորէն վարդապետ (ապա՝ եպիսկոպոս) Ստեփանէի աշխատութեան ու գործունէութեան վրայ»...²³):

²³⁾ Տես ibid., էջ 123:—Ե. Ն. Թ. Ն. Դպրանոցի «Յիսնամեակին» ներած աշխատութիւնը Խորէն վարդապետ (ապա՝ եպիսկոպոս) Ստեփանէի մասին, ի միջի այլոց, հաղորդում է հետեւեալը: 1873 թ.-ի «յունիսի 11-ին Խորէն վ. հրաժարական է տալիս պաշտօնից ինչ-ինչ տարաձայնութիւնների պատճառով (?): Սինոդն № 2188 հրամանագրով արձակուած է համարում Խորէն վարդապետին» Ե. Ն. Թ. և ծխական Ն. Գպրանոցների վերատեսչութիւնից, որը ստանձնել էր 1871 թ.-ի «յունիսի 2-ին Գեորգ Դ. Կաթողիկոսի հաճութեամբ Սինոդի հրամանով»... Տես ibid., էջ 128 և 123:—Թերեւս դոյն Խորէն վարդապետի մասին Ե. Ն. Թ. Ն. Դպրանոցի «Յիսնամեակը» պատմագրող «մասնաժողովը» գրում է հետեւեալը՝ «Դպրանոցի դի-

Տիւր-ը անցեալ... Ստիպին՝ «Շնորհքն Աստուծոյ, որ այնչափ զբաղու- յայլ, ի Ժեղ Յայն զկորուսանէ զիւր ոյժ, Յայն լի էր- յի՛ կորուսեա զաւ- նա ապա-նի-նի-ն»²⁴):


Այսօր մեզ՝ XX-րդ դարու բարդ և խճճաւոր խնդիրներով ծանրաբեռնաւոր շեմքին կանգնածներին պարտ է լինել՝ պարսպանալ հետեւել Դպրանոցի նախկին պարտաճանաչ և օրի-

ւանում գործեր կային միայն վերջին 1875 թուականներից մինչև մեր օրերը: Նրանից առաջուայ գործերից միայն մի քանի հատուկօր թղթեր երևացին 1860-ական թուականների գործադարութեան վերաբերմամբ: Այդ թղթերն էլ մեծ մասամբ թերի, անբովանդակ էին: Երկրորդ բացումից մինչև 1875 թ. գործեր չլինելու մասին ականատեսները պատմում են, որ իս... վարդ. Ստեփանէ բոլորը կրակ է տուել, այլել: Այն մի քանի կտոր թղթերն էլ ուժով ձեռքից խլել են: Անտարակոյս Խ. վարդապետն այլ դիտաւորութիւն չէր կարող ունենալ, բացի նրանից, որ ցոյց տար, թէ իրանից առաջ անապատ է եղել: Այն ժամանակուայ ուսուցիչները պատմում են, որ Դպրանոցը մի պահաւան է ունեցել, գրեթէ լիքը գործերով: Վերջը պատմութեան համար այնպիսի թանգ աղբիւրները կրակի ճարակ են լինում մի կրթութեամբ, լուսաւորութեամբ վարդապետի ձեռքով... Յանցանքն այնքան ծանր է թուում մեզ, որ դժուարանում ենք հաւատալ, թէ պէտ յոյնչափ էլ դժուարանում ենք չհաւատալ պատմող յարգելի անձնաւորութիւններին: Տես ibid., էջ ԺԶ:

²⁴⁾ Տես վճռալի Մատթէոս Կաթողիկոսի 1864 թ. փետր. 25-ի № 146 կոնդակը: Ibid., էջ 82:

նակելի ախոյեաններն օրինակին: Այսօր մենք՝
Դպրանոցիս ղեկը ստանձնողներս՝ Բարյապետ
պարտ ենք թափել ամեն ճիգ, չինայել ոչ մի
ջանք՝ Դպրանոցիս նախկին՝ «Սէմինարիա» ա-
նունը վերականգնելու և՛ ժողովրդի և աշա-
ղակերտի առաջ «Դպրոցների» վեհաժողովը՝
«Փառք ու պատիւ» իրականացնելու: Ժողովը-
րէն պէտք է առ միշտ հասկացնել, թէ՛ «Դպրոց-
ները» , «Լա Կոմի, Լա Կոմի» Բրեյլ Լամանյո-
հանար՝ ղէն: ²⁵⁾ Աշակերտէն պէտք է իրականու-
թիւնով՝ համոզեցուցիչ փաստերով՝ «Դպրոց-
ների զործունէութիւնով» ցոյց տալ, թէ՛ նա
ի՞նչ պարտաւոր է որոնել Դպրոցը: Այսօր այդ—
և միմիայն այդ—պիտ լինի «Դպրանոցներին» ղեկը
ստանձնող — վարողների անդամներն ապա-
րտելը...

Ահա՛ այդ վեհազոյն նպատակի համար է, որ
ես թողլ եմ տալիս ինձ վերջացնել խօսքս՝ խո-
նարհաբար խնդրելով Երևանի Յ. Թ. Հ. Դպրա-
նոցի և՛ կառավարչական, և՛ ուսուցչական, և՛
աշակերտական խմբերից, համախմբելով հա-
պարի՛մ հաւելով Դպրոցներէն և երբեք չսոց ղեկը-
նելով մեր յետեւից աշակերտներն համարաշին-
ման համար Դպրոցները:



²⁵⁾ Տես ibid., էջ 115:

Յ. Գ.

(Տես էջ 12):

Երևանի Յ. Թ. Հ. Դպրանոցի Հոգաբարձութիւնը
Դպրանոցի աղքատ աշակերտների շորերի համար ծախս-
ւելիք գումարի «պակասը» լրացրեց այսպէս.

Նոյեմբերի 18-ի հոգաբարձական նիստում պ.պ. հո-
գաբարձուները, համաձայն հոգաբարձու պ. Տիգրան
Աֆրիկեանի առաջարկին, որոշեցին՝ տալ իրենց կողմից
350 ռուբլի. Այդ մասին օրագրութիւն ևս կազմեց:

Նոյեմբերի 22-ին Դպրանոցի վարչութիւնը՝ Տ. Նա-
խագահը, պ.պ. հոգաբարձուները և ես ներկայացանք
Վ. Կաթուղիկոսին Երևանի առաջնորդարանում (Վ.
Կաթուղիկոսը եկել էր էջմիածնից՝ Թիֆլիս գնալու).
Վ. Կաթուղիկոսը, ի միջի այլոց, խորհրդաւոր ժպիտը
երեսին ասաց պ.պ. հոգաբարձուներին՝

«Ի՛նչ է, կարծում էք լա՛ տեսուչ էք ընտրել.
սպասէք, նա ձեր գլուխը է՛ն ցլինը հանի որ...»:

Ներսէս արքեպիսկոպոսը (ընդմիջելով)՝ «Արդէն
ցլինը հանեց. պ.պ. հոգաբարձուներից 350 ռուբլի
փող պոկեց աշակերտների օգտին»:

Վ. Կաթուղիկոսը (նոյն ժպիտը երեսին)՝ «Այդ ի՛նչ
է որ. սպասէք, սպասէք...»:

Յայտնի մանկավարժ պ. Ս. Մանգինեանը մի գե-
ղեցիկ ոճ ունի՝ «Մարդիկ չեն կամենում այն տեղը ծեփել
որտեղից որ սատանի պոչը երևում է» (Տես Ս. Ման-
գինեան՝ «Մանկավարժական տարակուսանքներ մեր
մէջ» և հրատարակութիւն Ա. Յովհաննիսեանի, Գ., 1875
թ., Տիֆլիս, էջ 47):

Թէ ի՛նչ «պոչեր» երևացին, թէ ի՛նչ «օլիւններ»
տեղի ունեցան Ե. Յ. Թ. Հ. Դպրանոցում Վեհափառի

այդ խորհրդաւոր խօսքերից յետոյ և թէ ինչո՞ւ և ինչպէս ես հեռացայ Երևանից, այդ մասին ես առ այժմ կ'ընեմ: Այստեղ ես կ'արձանագրեմ միայն 350 թուրքուն վերաբերեալը:

Վեհափառը անցաւ Թիֆլիս:

Դեկտեմբերի 2-ի հոգաբարձական ժողովում ես ներկայացրի № 5-րդ զեկուցումը - ս' «Երևանի Հ. Թ. Հ. Դպրանոցի շրեքի կարօտ աշակերտների ցուցակը» - ի մասին: Չեկուցումը - ս վերջանում էր այսպէս.

«Ձեմ կարող չարտայայտել բարոյական գոհունակութիւնս՝ Ե. Հ. Թ. Հ. Դպրանոցի աշակերտների հագուստների միաձեւութիւնը շուտափոյթ իրականացնելու նպատակաւ անցեալ ժողովում պատուարժան հոգաբարձութեանդ արած բարեսիրտ ներաբերութեան առթիւ ևս: Պատուարժան հոգաբարձութիւնդ այդպիսով՝ կրկին և կրկին վաստակեց Դպրանոցիս աշակերտների պարտաճանաչ շնորհակալութիւնը:

«Բարեսրտութիւնը ամենաազգեցիկ կրթող տարրերից է. և եթէ այսօր Դպրանոցիս աշակերտների երբեմն մանկական ուղեղը անկարող է, ապագայում կարող կլինի ըստ արժանւոյն գնահատել պատուարժան հոգաբարձութեանդ բարեսիրտ ներաբերութեան բարոյական վեհութիւնը»:

Այդ խօսքերից յետոյ անմիջապէս խօսեց Տ. Նախագահը՝ լի՛նչ կարիք կայ նեղութիւն տալ պ. պ. հոգաբարձուներին. նրանք ընէնց էլ շատ են տալիս (?!). չուզի, թող հոգաբարձուները չտան»:

Եւ... պ. պ. հոգաբարձուները լետ բաշխեցին իրենց խօսքից: Միայն պ. Տ. Աֆրիկեանը փորձեց, սակայն շատ թոյլ, դիմագրեւ...

Ես դժարանում եմ ըստ արժնւոյն գնահատել Հ. Թ. Դպրանոցի Տ. Նախագահի այդ քայլը... Թամենայն դէպս, Ներսէս արքեպիսկոպոս Խուզավերդ-

եանը իր այդ քայլով վնասեց Դպրանոցի խղճուկ բոքիկ աշակերտներին միայն, քանի որ պ. պ. հարուստ հոգաբարձուների (Դպրանոցը ունի այսօր ճիշդ հոգաբարձու՝ պ. պ. Տիգրան Աֆրիկեան, Գրիգոր Ամիրեան, Գէորգ Անտոնեան, Զաքար-աղա (?!) Գէորգեան և Արտաշէս Դարբիէլեան) մի քանի տասնեակ թուրքինները իրենց՝ պ. պ. հոգաբարձուների փարթամ կերուխումի ճոխութիւնը, ի հարկէ, չէին կարող պակասցնել:

Նոյն նիստում Տ. Նախագահը հրամայեց պ. Քարտուղարին՝ «հանել 350 թուրքուն վերաբերեալ կտորը նախորդ արձանագրութիւններից»:

Ես հակաճառեցի՝ «Այդ անել անկարելի է. չէ՞ որ իմ № 5-րդ զեկուցումը մնալու է գործերիդ մէջ, հապա ի՛նչպէս պիտի հասկանայ ապագայի պատմագիրը զեկուցմանս մէջ արտայայտած շնորհակալութիւնը»:

Արքեպիսկոպոս Նախագահի պատասխանը էր՝ «Ի՛նչ պատմութիւն...» — պ. Քարտուղարին՝ «հանէ՛ք այդ կտորը»:

Եւ «կտորը», յիրաւի, հանեց...


Ինձ մնում է յիշել պ. Սեդրակ Մանդինեանի՝ դեռ 1875 թւին՝ հայ Դպրանոցի մի քանի խնամակալներին ուղղածը՝

«Վախելեցէք իմ առ ի սրտէ զգուանքը»!...

(Տես Ս. Մանդինեան՝ ibid.)

18 ²⁴/_{VI} 99 թ.,

Մոսկա:



20832

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0055937

